# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/132 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Մարզական հագուստը կազմված պետք է լինի սպորտային բաճկոնից՝ գլխանոցով և սպորտային տաբատից: Գործվածքը՝ բամբակ/պոլիեսթեր խառնուրդ (ոչ պակաս, քան 60% բամբակ) կամ բարձրորակ 100% պոլիեսթեր՝ շնչող հատկությամբ: Գործվածքը պետք է լինի հիպոալերգիկ, չնստող, չձգվող բազմակի լվացումներից հետո, գույնի կայունություն՝ արևի և լվացման ազդեցության նկատմամբ: Կրկնակի ամրացված կարեր, որակյալ մշակում՝ առանց թելերի դուրս գալու, հարթ և մաշկին չվնասող ներսային կարեր, ամուր կայծակաճարմանդ՝ առկայության դեպքում: Սպորտային բաճկոնը՝ երկարաթև, առջևի փակող կայծակաճարմանդով կամ առանց: Սպորտային տաբատը՝ էլաստիկ գոտկատեղով և կարգավորվող լարով, ունենա առնվազն 2 գրպան: Գույնը՝ կապույտ, վարդագույն, կարմիր, բաց մոխրագույն, դեղին՝ 5-17 տարեկան աղջիկներին և տղաներին համապատասխան գույների համադրությամբ, պիտակավորված: Չափսերը պետք է համապատասխանեն մանկական/պատանեկան չափսային ցանցին՝ 5-17 տարեկան կամ XS-XL: Պիտակների վրա պետք է նշված լինի սպորտային հագուստի չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարար կազմակերպությունը գնումը շահելուց հետո 10 օրվա ընթացքում պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Գնի մեջ |

| | | |
|---|---|---|
| | | ներառում է փաթեթավորումը թղթե կամ պոլիէթիլենային տոպրակների մեջ, ինչպես նաև առաքումը վարչական շրջան: Փաթեթավորումը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/132 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | - | - |